SARDARABAD

1906 - 1976
70º ANIVERSARIO DE LA
UNION GENERAL ARMENIA
DE BENEFICENCIA

Año II, Nº 29 Buenos Aires
Sábado 11 de Diciembre de 1976

Franqueo Pagado: Concesión Nº 2176 - Tarifa reducida: Concesión Nº 5276 - Correo Central - Sucursal 14

# DEPORTIVO ARMENIO

D. ARMENIO

**FESTEJO SU ASCENSO A 1ra. B, EN LOS SALONES DEL ALVEAR PALACE HOTEL Y EN DEFENSORES DE BELGRANO, DONDE ADEMAS DE RECIBIR EL APOYO POPULAR QUE LO OVACIONO COMO CAMPEON, OBTUVO NUMEROSAS CARTAS DE FELICITACIONES DE ENTIDADES ARMENIAS DE BUENOS AIRES - CORDOBA - ROSARIO, E INSTITUCIONES ARGENTINAS: RIVER PLATE, BOCA Jrs. VELEZ SARSFIELD, CENTRAL CORDOBA, AFA Y EQUIPOS DE 1ra. C, entre otros.**

# CULTURA ARMENIA EN PELIGRO



Խաչքարերու գերեզմանոցէն լուսանկար մը, Հին Ջուղայի մօտ, լուսանկարուած իտալացի ճարտարապետներու կողմէ

En la R.S.S. de Najichevan, —históricamente perteneciente a Armenia—, se han comprobado actos de vandalismo contra los históricos monumentos armenios "Jachkar" de los siglos XV al XVIII.

Iglesias, Palacios, Jachkar, y todo tipo de monumentos históricos, han sufrido hasta el momento, en lo que va de este siglo, una destruccion metódica y sistemática por parte de Turquía, con el propósito de demostrar que nunca existió una raza y una Nación Armenia.

Hoy comprobamos con mucho pesar, que en la "hermana" República de Najichevan, se cometen Actos de Destrucción de Jachkar, corroborados por el famoso equipo de estudiosos y científicos italianos, encabezado por el Profesor: Alpago Novello, como de turistas armenios.

El presente testimonio que publicamos como un alegato a la Humanidad, en página central de esta edición y que transcribimos del Diario Baikar, órgano oficial de la Organización Demócrata Liberal Armenia de EE.UU. (RAMGAVAR AZADAGAN) no lo efectuamos con el simple propósito de crear polémicas, sino para que el pueblo y el gobierno de Armenia, así como el de la Diáspora, tomen conciencia del peligro, y aunen sus esfuerzos para frenar la destrucción de aquellos miles de Jachkar, muestra inalienable de nuestro acerbo cultural.

# U G A B

## TRES ESPECTACULARES DIAS EN LA UGAB

*CAFE CONCERT*

La Unión General Armenia de Beneficencia, abrió la noche estelar del viernes 26 de noviembre, con su anunciado CAFE CONCERT, que congregó a una nutrida concurrencia. Conocidas figuras del ambiente artístico, lucieron su ingenio, gracia y buen humor, —como el Sr. Guillermo Rico—, o bien, su canto como —Los Gauchos de Güemes— entre los números presentados.

Destacamos la participación especial del Sr. Vahram Hairabedian, quien entonó canciones en idioma armenio.

Calurosos y merecidos aplausos cerraron la velada, que brilló en jerarquía, calidad, y entretenimiento.

*KERMESSE*

Conjuntamente con la presentación del CAFE CONCERT, el día 26 de noviembre se procedió a la apertura de la Gran Kermesse que organiza anualmente la UGAB en su sede.

Allí pudimos apreciar novedosos juegos y entrenimientos —como el TELEMATCH— que atrajeron la atención de los asistentes.

La sincrónica organización que se prolongó hasta el sábado 27, estuvo a cargo de los miembros de las distintas comisiones que integran la Institución.

Niños, jóvenes y mayores, disfrutaron así de un ambicioso fin de semana, con premios, juegos, y sabrosos brochets de la cocina oriental.



Vista parcial del nutrido almuerzo en UGAB. Abajo: el cantante Arturo Kouyoumdjian en una de sus interpretaciones.

## ASADO CON MUSICA Y PREMIOS

Cuando nos referíamos al fin de semana pasado en UGAB, no nos equivocábamos. Para finalizar el mismo, el domingo 28 continuaban los festejos en un almuerzo-show, que contó con la participación del cantante Arturo Kouyoumdjian, acompañado por la orquesta de Erevan. También, hizo su aparición el Conjunto Instrumental "BBACHIG", compuesto por alumnos del Instituto Secundario MARIE MANOOGIAN, y a pedido del público, el Sr. Vahram Hairabedian.

En un clima de sana diversión, donde se bailó, cantó, se sortearon importantes premios y se apreció los encantos de un exquisito asado, transcurrió la tarde, contagiosa de alegría y diversión.



## "Colegio M. Manoogian": el más sobresaliente de los conceptos

El colegio Primario, Preescolar y Jardín de Infantes "Marie Manoogian", celebró el término del año lectivo 1976, en el Salón Sarkis Benklián de la UGAB local.

Padres y demás presentes, asistieron a uno de los más bellos actos escolares, que el cuerpo docente del establecimiento les tiene ya acostumbrados, en el que los niños cantaron, bailaron, y representaron, rodeados de una escenografía especialmente preparada para el mismo.

Ya en el final, se agruparon alrededor de un majestuoso y simbólico árbol de Navidad y entonaron villancicos en distintos idiomas. Más tarde se invitó al Sr. Luis Eduardo Imperatore —Supervisor Pedagógico— a cerrar el acto, quien lo hizo expresando su más alto concepto con respecto al colegio, merecimiento fundamentado en espíritu de familia y jerarquía técnica, demostrados en los años de existencia del establecimiento educativo.

En las palabras finales, las maestras desearon unas muy felices fiestas y vacaciones.

## *Brillante organización en la Fiesta de Fin de Curso del Colegio Secundario "M. Manoogian".*

El pasado jueves 2 de diciembre, el Colegio Secundario Marie Manoogian celebró en el nuevo Campo de Deportes, su fiesta de finalización del año lectivo.

La original presentación, estuvo a cargo de tres alumnos del Instituto, en representacón de los tres años de existencia del colegio. Hicieron uso de la palabra, el Prof. de Formación Cívica: Dr. Guillermo Bombelli y el Prof. de Educación Física: Sr. Roberto Carlos Daguerre, quien explicó los alcances de una buena preparación física, sus ventajas y beneficios, para un normal y sano crecimiento del cuerpo y la mente.

Numerosos fueron los cuadros y representaciones ofrecidos: canciones armenias a cargo de las voces del coro, dirigidas por la Prof. de música: Sra. Makruhí Eulmessekian; una bella melodía nglesa interpretada y entonada por los alumnos, bailes folklóricos armenios y argentinos, graciosos sketchs, y entre otros, el recitado en idioma inglés de una poesía del inmortal Avedik Isahakian.

En la segunda parte del acto, se desarrolló la Fiesta de la Educación Física, donde las alumnas demostraron su elasticidad y coordinación y los jóvenes su destreza sobre cajón sueco y colchonetas.

# SAN PABLO

## CONMEMORAN EL 50º ANIVERSARIO DE LA INMIGRACION ARMENIA

Na segunda-feira passada, o governador Paulo Egydio Martins e senhora recepcionaram representantes da comunidade no Palácio dos Bandeirantes quando foi oferecido um coquetel. Na oportunidades, o governador do Estado recebeu um "Khach Kar" em bronze, na forma de um crucifixo simbolizando a fé cristã dos armênios, pelo qcal agradeceu fazendo um pronunciamento sobre a significativa participação e integracão das várias correntes imigratórias na vida nacional e, em especial, o que representou, para o progresso do País, a vinda dos imigrantes armênios "hoje perfeitamente identificados com o pensamiento brasileiro".

"Gostaria, em primeiro lugar —frisou Paulo Egydio— de agradecer a presença da coletividade no Palácio. Esse agradecimento se estende também a este símbolo da fé com que eu e minha esposa acabamos de ser presenteados. Símbolo milenar, fato presente, que continua nos unindo".

Em seguida o governador ressaltou a integração "absoluta dos armênios em nossa vida, em nosso País, a integração onde nós não poderemos distinguir ninguém, entre brasileiros natos, imigrantes, pertenecentes á vossa comunidade".

Até certos nomes, ressaltou Paulo Egydio, já se tornaram, de certa forma, intiramente familiares no nosso vocabulario —"Isso significa a herança mais preciosa que o Brasil possui; isso tem um sentido da democracia que trascende ás fórmulas fáceis, muitas vezes discutidas e não aplicadas". E a possibilidade de mantermos em nosso País uma sociedade aberta —disse o governador— onde imigrantes de ontem são inteiramente incorporados á nossa sociedade".

Estiveram presentes no Palácio dos Bandeirantes entre diversos representantes da comunidade armênia Avedis Clemente Kherlakian, e José Distechekenian, dirigentes da Comissão Especial do Cinquentenário; membros do Conselho Central da Igreja Católica Apostólica Armênia do Brasil, responsável pelas conmemorções; o prefeito Olavo Setúbal, o secretario Roberto Cerqueira César, dos Negócios metropolitanos e o coronel Moacyr Teixeira da Silva Braga, chefe da Casa Militar do Governo do Estado.







### NOITE DE ARTE

As 21 horas, no Teatro Municipal, a comunidade armênia paulista e representantes do Rio Grande do Sul e do Paraná, assistiram a uma noitá de arte armênia com a participação, na primeira parte do Coral de Comunidade Armênia do Brasil, sob a regência do Padre Hovsep Chadarevian, que executou onze números de folclore e da cultura armênia e contou ainda com a participaço de diversos membros da comunidades que executaram músicas e cánticos típicos armênios além do recital da poesía de Cassiano Ricardo "O Imigrante". Na segunda parte do programa, os conjuntos Shiraz e Electronico de Montevideo dançaran diversos números de folclore armênio com a participação dos solista Assadur Kiultizian, Garabed Ekizian e Hildaléa Gaidzakaraian. A noite de arte foi apresentada pelo pastor Moisés Djambasian (em armênio) e por Simão Khorimian (em portugués).

Entre dezenas de convidados se encontravam presente o secretário Adhemar de Barros Filho, representando o Governador Paulo Egydio Martins, o vereador Samir Ahõa, representando a Cámara Municipal de São Paulo, Carlos Kherlakian representando o presidente da Cãmara de Comércio de São Paulo, eng. Paulo Salim Maluf e o deputado Freitas Nobre.

Na sexta-feira, ás 21 horas, a comunidade armênia ofreceu um banquete em homenagem ás autoridades civis e militares do Brasil, quando o secretário Adhemar Barros Filho, representando o governador do Estado do São Paulo, resaltou o papel do armênio no País dizendo "que povos que aqui chegam, mesmo continunando unidos por coração a suas terras de origem, entregam suas almas e força na contracão de um Brasil melhor e mais fortalecido com a junção de outras comunidades de imigrantes que aquí souberam reconstruir o seu lar, fazendo do Brasil a sua Pátria, a terra de seus filhos".



Durante o jantar foi lançado em portugês o livro "A História do Povo Armênio" de autoria do escritor armênio, hoje radicado na Argentina Ashot Adruni.

No sábado, Dom Paulo Evaristo Arns celebrou missa solene as 11 horas, na Catedral da Sé em honra da imigração armênia no Brasil ajudado, na cerimõnia por sacerdotes armênios.

No domingo, o prefeito Olavo Setúval entregou á população de Sao Paulo a Praca Armênia, na conflências das avenidas Tiradentes e Santos Dumont encerrando assim as fetividades da comunidade.

"ALMANARA" San Pablo, 4 de Noviembre 1976

# PELIGRAN LOS JA
# EN NAJU

## ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ



Հայ ճամբորդներու կողմէ լուսանկարուած խաչքարերը Հին Ջուղայի մօտ. անոնք կը սպասեն ազրպէյճանցի գիւղացիներու խնամոտ ձեռքերուն, արժանանալու համար իրենց ծանօթ ճակատագրին

Մեր ժողովուրդին համար ողբերգութիւն մըն է որ իր անհուն նահատակութեանցն ետք, տակաւին այսօր կը տեւէ նահատակութիւն իր պատմական յուշարձաններուն՝ Այաշէն ու Սիւնէն մինչեւ Անի եւ Վան-Տոսփ. չարանենգաբար տաճարներ կը փլցուին, պալատներու պարիսպներ վար կը բերուին ու հետզհետէ ամէն հետք երկրի երեսէն կը սրբուի՝ արդարացնելու համար Թուրքին այն հաստատումը թէ՝ հայերը երբե՛ք այդ չեն եղած, չեն ունեցած պետականութիւն ու քաղաքակրթութիւն. բնականաբար երբ վար կ'առնուին խաչերը, կը փլցուին տաճարներու գմբէթները եւ անճանաչելի կը դառնայ մեր պատմական հողին տրամագիծը՝ կը դժուարանայ մեր զարմը աշխարհին հաւատացնելու – մանաւանդ որ աշխարհը խուլ ականջ ձեւացնելու մեծ փորձութիւն մըն ալ ունի – թէ մե՛նք ալ ժառանգութիւն ունեցած ենք Թուրքերու կողմէ բռնագրաւուած հողերուն վրայ, մենք ալ քաղաքակրթութիւն ունեցած ենք եւ թէ մենք Ե. դարուն ոսկեդար մը կերտած ենք, թէ Անիի եւ Կիլիկիոյ թագաւորութեանց շրջաններուն մենք աշխարհի աւետած ենք գալիք զարգացումը Վերածնունդին:

Անհատներ ու կազմակերպութիւններ յաճախ կը խորհին դիմելու Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, խնդրելու, պահանջելո՛ւ, աղաչելո՛ւ եւ բողոքելու համար որ Թուրքերը դադրեցնեն քանդումը մեր ճարտարապետական հրաշագեղ կոթողներուն հայկական ճարտարապետութիւնը մարդկային միտքի ամենէն գեղեցիկ արտայայտութիւններէն մէկն է:

Դժբախտաբար, ցարդ ոչինչ կրցած ենք ընել կեցնելու համար կործանումը մեր այդ պատմական յուշարձաններուն. կ'ընդվզի՛նք, կը բողոքենք, մեր ակռաները կը կճռենք ու կը... լանք: Կ'ընդունինք՝ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՆ:

Թուրքը՝ Թուրք է եւ իր Թրքութիւնը պիտի ընէ չարունակելով իր քանդումի գործը:

Միւս կողմէ, սակայն, որոշ մխիթարութիւն ունինք որ ներկայ Հայաստանի մէջ կը պահպանուին մեր տաճարներն ու հին պալատները. սթալինեան շրջանին ախոռի եւ յարդի ամբարի վերածուած մեր տաճարները կը պարպըւին իրենց ախոռ բովանդակութենէն, կը կոկուին, կը նորոգուին եւ պետութեան ու ժողովուրդին գուրգուրանքին կ'արժանանան:

Ներկայ Հայաստանի ճիշդ սահմանին մօտիկը, սակայն, պատմական Նախիջեւանի մէջ, որ մեզմէ անարդարօրէն խլուելով տրուած է «եղբայրակա՛ն» Ազրպէյճանին, մեր պատմական յուշարձանները դժբախտաբար կ'արժանանան այն ՄԻԵՒՆՈՅՆ բախտին որ ճակատագրըւած է Թրքահայաստանի մեր յուշարձաններուն: Իսկ ամենէն ծիծաղելին այն է որ Նախիջեւան սահմանակից անգամ չէ Ազրպէյճանի, որ Հայաստանի հողին ու գլխուն վրայէն անցնելով՝ իր վարչական իշխանութիւնը հաստատած է հայկական այս պատմական հողին վրայ: Ազրպէյճանի կառավարութիւնը տասնամեակներէ ի վեր հալածանքի «եղբայրակա՛ն» քաղաքականութիւն մը կը կիրարկէ հայկական Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ: Արդէն, Նախիջեւանի մէջ հայոց թիւը վաղուց դադարած է մեծամասնութիւն մը ըլլալէ: Իսկ Ղարաբաղի հայկական խիտ բնակչութիւնը, որ 86 տոկոսն էր այդ «ինքնավար» շրջանի ամբողջ բնակչութեան, արդէն ներկայիս իջած է 80 տոկոսի: Եթէ չարունակուի այսօրինակ «եղբայրութիւնը» կասկած չկայ թէ Լեռնային Ղարաբաղն ալ հետըզհետէ պիտի յանգի Նախիջեւանի վիճակին:

Այնպէս կը թուի թէ Ազրպէյճանի մէջ Թուրքը դարձեալ պիտի ընէ իր Թրքութիւնը՝ «սոցիալիստական եղբայրութեան» դիմակին տակ:

Նախիջեւանի Հին Ջուղայ քաղաքին մօտիկը գոյութիւն ունի խաչքարերու հսկայ անտառ մը, 16էն 18րդ դարու հարուստ յուշարձաններով (տեսնել խաչանիշը քարտէսին վրայ):

Ազրպէյճանի իշխանութիւնները խիստ արգելքներ դրած են, յատկապէս հայերու համար, այդ շրջանը այցելելու, ուր կը կատարուի ԱՀԱՒՈՐ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ:

Այնտեղ, ազրպէյճանցի գիւղացիները խընամքո՛վ կը հանեն այդ խաչքարերը իրենց տեղէն, նոյն խնամքո՛վ կը կոտրեն զանոնք պանիրի պէս, եւ կտոր - կտոր կը տանին զանոնք՝ իրենց տուները կառուցանելու. այդ ալ կ'երեւի ազրպէյճանցիներու կերպն է... սոցիալիզմ կերտելու:

Ազրպէյճանցի գիւղացիները իրենց վանդալիզմին առարկայ կը դարձնեն աւելի 18րդ դարու նրբահիւս խաչքարերը՝ քան 16րդ դարէն մնացածները, ոչ անոր համար որ աւելի յարգանք ունին հինին հանդէպ, այլ անոր համար որ հինցած կը նկատեն այդ քարերը, հետեւաբար, անյարմար՝ տուներու կառուցման մէջ գործածուելու:

Խաչքարերու այդ աշխարհը այցելելու բացառիկ արտօնութիւն ստացած էր իտալացի ճարտարապետներու խումբ մը, որ հայ ճարտարապետութեան նուիրուած հոյակապ հատորներու շարքը հրատարակեց: Այս դրութեան կից հրատարակուող նկարներուն երկուքը առնուած




Հայաստանի եւ Նախիջեւանի քարտէսը, որ խա... քաղաքը, որուն մերձակայքին...

են անոնց հրատարակած խաչքարերու հատորէն: Միւս երկու նկարները, սակայն, առնուած են մարդոց կողմէ, որոնք այցելած են այն շրջանը, հակառակ այն զգուշացումներուն որ կրնան... իրենց կեանքը վրայ տալ: Այսուհանդերձ, աչք առնելով այդ վտանգները՝ մեր յուշարձաններուն հանդէպ գուրգուրանք ու պաշտամունք ունեցող մարդիկ, գացած են Հին Ջուղայ եւ լուսանկարուած՝ խաչքարերու վըրայ գործադրուող այս բարբարոսութիւնը: Ապա՝ դիմած են Հայաստանի պետական իշխանութեանց որպէսզի «եղբայրաբար» միջամտեն եւ արգելք հանդիսանան այս կործանարար աշխատանքներուն, յանուն բոլոր այն սկզբունքներուն, որոնք ի զօրու են աշխարհի այդ մասին վրայ:

Դժբախտաբար սակայն, Հայաստանի կա-

# CHKAR ARMENIOS
# CHEVAN



Ահա ողբերգական նկարը, առնուած հայ ճամբորդներու կողմէ. ձախի խաչքարը արդէն «գլխատուած» է, իսկ աջինը՝ տակաւին կը մնայ ամբողջ, սակայն արդէն խնամքով շերտուած է, փոխադրելու համար ազրպէյճանցի գիւղացիներու կողմէ, իբրեւ շինանիւթ





...քով ցոյց տրուած է Հին Ջուղայ
...խաչքարերու անտառը

## ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԷՏՔ Է ՏԷՐ ԿԱՆԳՆԻ ԻՐ ԽԱՉՔԱՐԵՐՈՒՆ

«Պայքար»ի ներկայ թիւով լոյս կը տեսնէ սրտաճմլիկ լուր մը՝ բովանդակ հայ ժողովուրդին համար անիկա կը վերաբերի պատմական Նախիջեւանի մէջ նաչատակուող խաչքարերուն. լուրին առընթեր հրատարակուած լուսանկարներէն Ձը կը պարտինք խուլացի ճարտարապետներու, միւս Ձն ալ՝ հայ ճամբորդներու քարտէսը ցոյց կու տայ վայրը - Հին Ջուղան - ուր այժմ տեղի ունենալու վրայ է այդ աչաւոր նաչատակութիւնը:

Մեր կարծիքով՝ամէն հայ, սփիւռքի թէ հայրենիքի մէջ, այն անհաւատալի ողբերգութեան իրազեկ պահուելուն, չի կրնար իր արդար զայրոյթը պարտկել՝ պատահող սարսռազդեցիկ ոճրագործութեան դէմ:

Արդ, նկատելով որ այս մասին առաջին արտայայտուողը կ'ըլլայ «Պայքար» - այսինքն՝ սփիւռքի մէջ հրատարակուող օրաթերթ մը - կարելի է հետեւցնել թէ՝ հայրենիքէն դուրս ապրող հայութիւնը, այլասերման դէմ իր մըղած հանապազօրեայ մաքառումին առընթեր, տակաւին ինքզինք բատ բաւականին խորապէս հայ կը զգայ՝ այս անօրակելի ողբերգութեան դէմ ընդվզելու և իր անզուսպ բողոքը միեւնոյն սաստկութեամբ արտայայտելու համար:

Այսպէսով, կ'ուզենք ապացուցանել թէ՝ հայ ժողովուրդը այսօր ալ, ինչպէս երէկ, կը ներկայացնէ մէկ, անբաժան և անբաժանելի ամբողջութիւն մը, ուր աննուաղելի և աննուաճելի ազգային նախանձախնդրութեամբ տէր կը կանգնի իր բոլոր ազգային հարստութեանց, որոնց մէջ կասկած չկայ որ խաչքարերը կը գրաւեն առաջնահերթ տեղ:

Ամէն հայ որ իր կեանքին մէջ խաչքար տեսած է, առաջին ակնարկով իսկ գաղափար կազմած է անոր անկրկնելիութեանը մասին. քանդակուած քարը, որ այդպէսով նուիրականութեան դրոշմն առած է իր վրայ, դարերու մաշումին դիմացող ամենէն հզօր նիւթեղէնը կը թուի ըլլալ, մանաւանդ երբ զայն բաղդատենք խղանկար դարձած կաւին, մատունք դարձած թուղթին հետ:

Արդ, հակառակ այդ դիմացկունութեան, այսօր ցաւ և սիրտ կ'իմանանք որ՝ անոնք վանդալութեանց թիրախ դարձած են, այն ալ ոչ թէ հայ ժողովուրդի ոսոխրմ թշնամիներուն, այլ եղբայրական հանրապետութեան մը՝ Խորհրդային Ազրպէյճանի այն քաղաքացիներուն կողմէ, որոնք կ'ապրին օտար - եղբայրակա՞ն - լուծին տակ հեծող հայկական Նախիջեւանին մէջ:

Այս տողերը մենք չենք գրեր դըրդութիւն յարուցանելու սին մարմաջով կը գրենք, որովհետեւ կը հաւատանք որ Խ. Հայաստանի կառավարութիւնը պիտի խըրացնէ մեր - և ընականաբար բովանդակ հայ ժողովուրդին - այս խոր մտահոգութիւն. եւ եթէ ան այդ մտահոգութիւնը մեզմէ առաջ խըրացուցած է արդէն - ինչ որ հաւանական ու բաղձալի է - այս տողերը դարձեալ կը գրենք, որպէսզի ան գործի անցնի անյապաղ եւ արժեցնէ հայ ժողովուրդին անրանարարելի իրաւունքները՝ այդ անփոխարինելի գանձերուն վրայ:

... Կ'ապրինք քաններորդ դարու վերջին քառորդին մէջ և չենք ուզեր հաւատալ իսկ որ աշխարհի երկու մեծագոյն պետութիւններէն մին - Խ. Միութիւնը - պիտի հանդուրժէր իր բաղկացուցիչ պետութիւններէն մէկուն պատմական յուշարձաններուն յափշտակութեանը՝ իր բաղկացուցիչ պետութիւններէն միւսին կողմէ:

Խմբագրական «ՊԱՅՔԱՐ»ի
Հոկտեմբեր 30, 1976

...ավարութիւնը ծանր խաչքար մըն ալ դըրած ...ր խղճին վրայ լռած է՝ թոյլ տալով որ չա...ուշնակուի այս բարբարոսութիւնը:

Ինչպիսի՜ եղբայրութիւն է այս, ի՜նչ յա...րաբերութիւններ են ասոնք, որ թոյլ կու տան ...յապխի նախճիրի մը գործադրութիւնը պատ...ական յուշարձաններու հանդէպ:

Անհրաժե՛շտ պէտք է պոռա՛լ, որպէսզի ...ատամեան այս սրբապղծութեան հեղինակնե...ը, որպէսզի կխրարկեն ԻՐԵՆՑ իսկ դաւանած ...ղբայրութեա՛ն և արդարութեա՛ն սկզբունք...ները:

«Ահաւոր բան մը այնտեղ կը կատարուի»... ...յսին մէջ. կը նահատակուի ամբողջ անտառ ...ը խաչքարերու: «Օգնութիւն, օգնութիւն, օգ...ութիւն», պիտի ըսէր Թէքէեան:

SEGURIDAD EN SEGUROS

- ACCIDENTES DEL TRABAJO
- ACCIDENTES PERSONALES
- AERONAVEGACION
- AUTOMOTORES
- CRISTALES
- GANADO
- GRANIZO
- INCENDIO
- ROBO
- PERDIDAS DE BENEFICIOS
- RESPONSABILIDAD CIVIL HACIA TERCEROS
- RIESGOS VARIOS
- TRANSPORTES TERRESTRES Y MARITIMOS
- VIDA (Colectivos e Individuales)



SUIZO ARGENTINA
COMPAÑIA DE SEGUROS S.A.

Maipú 42 - 5° - 6° - 7° Pisos - T. E. 30 - 6071/8
Buenos Aires
Sucursales en Tucumán y Córdoba

ՍԱՐՏԱՐԱՊԱՏ

1906 - 1976
Հայկական Բարեգործական Ընդհ.
Միութեան Հիմնադրութեան
70-ամեակ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 29 ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ
ՇԱԲԱԹ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1976

# ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓ ԵՈՒՍԷՖԵԱՆԻ ՀԵՏ



Հ. Բ. Ը. Միութեան 63րդ Պատգամաւորական ժողովին, այս տարի, Հարաւային Ամերիկայի պատգամաւորները կը ներկայացնէին պատկառելի թիւ մը: Պատուիրակութեան մէջ մեծամասնութիւն կը կազմէին Պուէնոս Այրէսի - Արժանթինի պատգամաւորները, զորս կը գլխաւորէր Հ. Բ. Ը. Միութեան Պուէնոս Այրէսի Մասնաճիւղի պատուոյ ատենապետ Պր. Հայկ Էմիրխան: Միւս անդամներն են Յովսէփ Եուսէֆեան, վարչութեան ատենապետը, Վահրամ Հայրապետեան և Գէորգ Մարկոսեան վարչական անդամներ. բոլորին ալ ազնիւ տիկինները կ'ընկերակցէին իրենց:

«Պայքար»ի խմբագրատան այցելութեան, շահեկան հարցազրոյց մը կ'ունենանք Պր. Յովսէփ Եուսէֆեանի հետ, հարաւային Ամերիկայի հայկական կեանքը և մասնաւորաբար Հ. Բ. Ը. Միութեան ազգօգուտ գործունէութիւնը մեր ընթերցող հասարակութեան ներկայացնելու նախանձախնդրութեամբ:

ՀԱՐՑՈՒՄ.- Հանեցէք մեր ընթերցողներուն պարզել Հ. Բ. Ը. Միութեան կեանքն ու գործունէութիւնը Պուէնոս Այրէսի մէջ:

*ՊԱՏԱՍԽԱՆ.- Բարեգործականի Պուէնոս Այրէսի Մասնաճիւղը հիմնուած է 1911 Թուականին: Ան ոչ միայն Հարաւային Ամերիկայի հնագոյն մասնաճիւղն է, այլեւ ամբողջ աշխարհի ամենահին մասնաճիւղերէն մին: Ունի աւելի քան երկու հազար անդամ - անդամուհիներ: Ունինք Միութեան պատկանող սեփական ակումբ:*

*Պուէնոս Այրէսի վարչութիւնը ունի հետեւեալ մասնաբաժինները՝ իրենց ենթակայ յանձնախումբերով.*

ա. Երիտասարդական Լիկան, *որուն շուրջ համախմբուած են չորս հարիւրի մօտ երիտասարդներ:*

*Ունի մշակութային ենթայանձնախումբ, որ կը կազմակերպէ դասախօսութիւններ* սինէ-ցիկլ *և մշակութային ձեռնարկներ: Կը ծրագրէ կազմակերպել նաեւ թատերական ներկայացումներ: Մշակութային ենթայանձնախումբը կ'արտատպէ հայկական ժողովրդային, աշուղական և կաթողիկէ ձայնապնակներ՝ տարածելու համար մշակոյթը սփիւռքահայ գաղութներուն մօտ: Մշակութային ենթայանձնախումբի նպատակը շահախնդրական չէ:*

*Ընկերային ենթայանձնախումբը կը կազմակերպէ ընկերային հաւաքոյթներ և պարահանդէսներ երիտասարդութեան համար: Ամիսը անգամ մը կը կազմակերպէ մանուկներու եւ պատանիներու համար զբօսական դաստիարակչական յայտագիր: Օգոստոս 16ին, միայն առանձնաբար քանի մը տարեկան* հայ *երկսեռ երիտասարդներու համար կազմակերպուեցին ընկերային հաւաքոյթ մը, որուն մասնակցեցան 640 երկսեռ երիտասարդներ:*

*Մարզական ենթայանձնախումբը ունի իր վոլէ - պոլի, պասքէթ - պոլի և ֆութպոլի խումբերը, որոնց մէջ կը մարզուին աւելի քան երկու հարիւր հայ մարզիկներ:*

*Յուլիս ամսուան մէջ տեղի ունեցաւ Հարաւային Ամերիկայի միջ-մասնաճիւղային մարզական խաղերու փառատօնը, Հ. Բ. Ը. Միութեան 70ամեակի նուիրուած: Այս մարզահանդէսին մասնակցեցան Մոնթէվիտէոյի, Սան Փաւլոյի, Գորտոպայի և Պուէնոս Այրէսի մասնաճիւղերը:*

*Մեր մարզիկները շահեցան առաջնութեան մետալներ ու բաժակներ:*

Բ. Տիկնանց Օժանդակ Մարմինն է: *Իր գործը կը կեդրոնանայ Հ.Բ.Ը. Միութեան Մարի Մանուկեան երկրորդական վարժարանի աշակերտութեան ճաշի պատրաստութիւնն ու սպասարկութիւնը: Ունին դասախօսական շարքեր և առողջապահութեան դասընթացք: Կը կազմակերպեն տարեկան ցուցահանդէս մը ուր կը ներկայացուի ճաշասեղանի յարդարման լաւագոյն նմուշներ: Վերջին անգամ երեսունըերկու տարբեր տեսակ սեղաններ ներկայացուեցան, 800 - 1000 հոգիի ներկայութեամբ: Մեր քաղաքին մէջ մեծ ժողովրդականութիւն ունին նման ցուցահանդէսներ: Մեր ազնուափայլ տիկիններուն պատասխանատուութեամբ ու պատրաստութեամբ կը կատարուի բոլոր ընկերային ձեռնարկներու ճաշի սպասարկութիւնը:*

*Դառնալ Հ. Բ. Ը. Միութեան Պուէնոս Այրէսի Մասնաճիւղի վարչութեան աշխատանքներուն, ունինք ինը հոգիէ բաղկացած վարչական կազմ մը՝ երեք ստորաբաժանումով.-*

ա. Կրթական, *որ պատասխանատուն է Հ. Բ. Ը. Միութեան Մարի Մանուկեան վարժարանի բոլոր ընթացիկ և կրթական աշխատանքներուն:*

բ. Մշակութային, *որ կը կազմակերպէ շուրջ դասախօսութիւններ՝ հայկական նիւթերով և գրական ու մշակութային մարդերու շուրջ: Կը կազմակերպէ նաեւ ցուցահանդէսներ՝ հայ նկարիչներու գործերէն: Եւ հայրենիքէն եկած արուեստագէտներու համար, կը դասաւորէ ելոյթներ ու կը կազմակերպէ յայտագիրներ:*

*Մշակութային մարմնի վերջին ձեռնարկը եղաւ, Աւ. Իսահակեան 100ամեակին առթիւ, հրատարակութիւնը և ցրումը անմահ վարպետին ստեղծագործութիւններէն լեզուով բանաստեղծութիւններուն:*

գ. Ընկերային, *որուն գործն է ակումբային կեանքի կազմակերպումը: Մեր ակումբը շաբթուան ամէն օրերը բաց է, մինչեւ ուշ գիշեր: Կը կազմակերպէ տարեկան ճաշկերոյթ - պարահանդէս մը: Այս տարուան պարահանդէսը տեղի ունեցաւ Յուլիս 4ին, 700 հոգիի ներկայութեամբ և արձանագրեց բացառիկ յաջողութիւն:*

դ. Շինարարական, *որ կը հովանաւորէ նորաշէն ակումբի աշխատանքները, զորս կը ղեկավարէ Պր. Հայկ Էմիրեան:*

*Հ. Բ. Ը. Միութիւնը այժմ դարձեր է գաղութիս հայրենասէր և էջմիածնասէր շրջանակներու առաջնորդը և դրօշակակիրը:*

— Ի՞նչ է ձեր տպաւորութիւնը Միացեալ Նահանգներու ազգային կեանքէն:

— *Այս երկար շրջապտոյտը անմոռանալի պիտի մնայ մեր յիշատակներուն մէջ:*

*Երբ Տիթրոյթի գեղակերտ Ալեք Մանուկեան վարժարան կ'այցելէինք, լսեցինք մատղաշ մանուկներու շրթներէն արտասանուած՝ Վ. Թէքէեանէն և Ս. Կապուտիկեանէն քերթուածներ, ինչպէս նաեւ «Երեւան - Էրեբունի» երգը և մեր աչքերը լեցուեցան ուրախութեան արցունքով: Հայրենիքէն հեռու, օտարութեան Նիւ Եորքի կեդրոնական գրասենեակները, ուր ծանօթացանք պաշտօնէութեան: Այցելեցինք Ս. Վարդան Մայր տաճարը և սիրալիր տեսակցութիւն ունեցանք Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հետ:*

— Հանեցէք տալ ձեր տպաւորութիւնները Միսսոնիօրինէֆի արարողութեան և Հ. Բ. Ը. Միութեան 63րդ Պատգամաւորական ժողովին մասին:

— *Կը վերադառնանք Ս. Էջմիածնէն, ուր*

իբր ուխտաւոր ներկայ գտնուեցանք Ս. Միւռոնի Օրհնութեան արարողութեանց եւ՝ որպէս պատգամաւոր՝ Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա.ի գահակալութեան քսանամեակին:

Հոն զգացինք ոչ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ փառքն ու պատմական հոյակապ անցեալը, այլեւ մեր Միութեան համազգային տարողութիւնն ու գտած ժողովրդականութիւնը:

Ծանօթացանք Լիբանանէն, Հնդկաստանէն, Իրաքէն, Եգիպտոսէն, Գանատայէն եւ այլ երկիրներէ եկած Բարեգործականի վարչականներու հետ: Մեզի համար մեծ ուրախութիւն եւ հպարտութիւն եղաւ, երբ տեսանք Վեհարանի կեդրոնական սիւնին վրայ բարերարներու անուններուն քանդակուած արձանագրութիւնը: Առաջին անունը Հ. Բ. Ը. Միութեանն էր եւ անկէ անմիջապէս ետք ազգային մեծանուն բարերար Ալեք Մանուկեանի անունը:

Յուզումի պահ մըն ալ ունեցանք հոն: Այս երկու անունները այդ արձանագրութեամբ պիտի անմահանան հազարամեայ մեր հոգեւոր կեդրոնի կամարներուն տակ:

Նիւ Եորք ժամանումով տեսակցեցանք Բարեգործականի վերին ղեկավարութեան հետ:

Հայաստանէն վերադարձի ճամբուն վրայ՝ այցելեցինք Աթէնքի «Արարատ» ակումբը, ուր եւս ծանօթացանք յունահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

— Ի՞նչ են ձեր տպաւորութիւնները նախագահ Ալեք Մանուկեանի հետ տեսակցութենէն ետք:

— Տիթրոյթ մեր կեցութեան առաջին օրն իսկ այցելեցինք եւ հիւրը եղանք մեր անձնական սիրելի Նախագահին:

«Պայքար»ի ընթերցողներուն կրնամ ըսել մէկ բան:

Շնորհիւ Վազգէն Ա. Վեհափառի հոգեւոր իշխանութեան՝ դարերու աւանդութիւն դարձած մեր հնագոյն հաստատութիւնը՝ Եկեղեցին վերջին քսան տարիներու ընթացքին ստացաւ համաշխարհային փայլ:

Իսկ շնորհիւ Հ. Բ. Ը. Միութեան ցկեանս նախագահ Ալեք Մանուկեանին, մեր մեծ Միութիւնը դարձաւ համազգային մարմին, որով ան հանդիսացաւ ոչ միայն Հ.Բ.Ը. Միութեան արժանաւոր նախագահը, այլեւ սփիւռքահայութեան նախագահը եւ առաջնորդը, շնորհիւ իր համբերատար ոգիին, այլասիրութեան եւ բարերարութեանց անոր նախագահութեան քսանըհինգ տարիներու ընթացքին՝ Բարեգործականը հասցուց ոսկեայ ու պատուաբեր գագաթի:

Վազգէն Ա.Վեհափառի եւ Ալեք Մանուկեանի լուսամիտ առաջնորդութեամբ, վստահ ենք որ հայ ժողովուրդի ապագան պիտի ըլլայ աւելի փայլուն, հայրենաբնակ թէ աշխարհացրիւ հայութեան համար:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Սան Փաուլոյի մասնաճիւղը Նոյեմբեր 14ին Ս. Պատարագ մատուցանել տուաւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա.ի գահակալութեան քսանամեակին առթիւ:

Օրուան պատարագիչ Տէր Թադէ քահանայ Թամճեան, յատուկ կերպով անդրադարձաւ Վեհափառին բարեմասնութեանց վրայ:




## 1976

70º ANIVERSARIO DELA UNION GENERAL ARMENIA DE BENEFICENCIA

50º ANIVERSARIO DE LA FUNDACION EDUCACIONAL "MELKONIAN"

30º ANIVERSARIO DE LA LIGA DE JOVENES DE LA UGAB - MONTEVIDEO

## *SOLEMNE ACTO EN HONOR AL BENEFACTOR SUDAMERICANO DON MISSAK KOUYOUMDJIAN*

Su Eminencia el Arzobispo PAPKEN ABADIAN —Primado de la Iglesia Apostólica Armenia para la América del Sud, le hará entrega oficial en representación de SU SANTIDAD VAZKEN I, Patriarca de Todos los Armenios, de la altísima distinción "ORDEN DE SAN GREGORIO EL ILUMINADOR EN PRIMER GRADO.

En la Segunda Parte, se realizará el Acto de Entrega de Diplomas a los primeros egresados del Liceo Integral Armenio "ALEX MANOOGIAN" de la FUNDACION EDUCACIONAL "MISSAK y ARPINE KOUYOUMDJIAN".

Sábado 11 de Diciembre de 1976

Salones del PARQUE HOTEL
Montevideo — Uruguay

## *Recetas Navideñas*

SHEKER LOKUM

*Ingredientes:*

230 grs. de manteca
2 tazas de harina
3 tazas de azúcar impalpable
2 tazas de nueces picadas o almendras tostadas

*Preparación:*

*Ingredientes:*

Mezclar bien la manteca con el azúcar. Agregar las nueces junto con la harina, previamente tamizada.

Con la mano darle forma de medialunas, y llevar al horno (moderado), luego suave, hasta que quede blanco.

Una vez retirado del horno, pasarlas 3 veces por el aúcar impalpable.

## Y el Tradicional:

ANUSH ABUR

*Ingredientes:*

1 taza de trigo entero
1 taza y media de damascos secos
1 taza y media de pasas rubias
3/4 litros de agua
2 tazas de azúcar

*Preparación:*

Al trigo lavado se le agrega el agua. Se remoja durante toda la noche, y al día siguiente se lo cocina a fuego lento durante una hora y media.

Se lavan las pasas y damascos en cuartos, y se les agrega al trigo junto con el azúcar.

Se cocina durante 30 minutos más, y se lo retira vertiéndolo en un recipiente profundo.

Mientras está tibio, se esparcen sobre la superficie almendras y avellanas tostadas. Servir tibio.

## El cometa del Torneo

*CUARTA CATEGORIA ZONA CAMPEONATO FINAL PARA EL ASCENSO*

| | |
|---|---|
| C. A. Talleres 3 | UGAB 2 |
| DAOM 0 | UGAB 3 |
| C. A. QUILMES 2 | UGAB 3 |
| CEAEZ 0 | UGAB 3 |
| C. A. INDEPENDIENTE 1 | UGAB 3 |

Brillante fue la actuación del equipo de Voley de la UGAB, en lo que va del año.

De los diez partidos jugados en el Campeonato de Clasificación, ganó nueve y obtuvo el Primer Puesto en dicho Torneo, clasificándose para jugar en el torneo semifinal por el esperado ascenso

En este certamen, lució un extraordinario desempeño logrando obtener seis victorias en ocho partidos, obteniendo el segundo puesto, conjuntamente con el Club José Hernández.

Los 2º y 3ros. de dicho torneo, están jugando conjuntamente con los tres equipos de 3ª división, un torneo donde de nueve equipos, se clasifican 6, para militar el próximo año en tercera división.

En la actualidad, se llevan jugados 5 partidos del mismo, de los cuales, 4 ya están ganados por el equipo de la UGAB, que les asegura la clasificación.

Por la excepcional campaña realizada hasta la fecha por este grupo de jóvenes, jugadores, técnicos, no dudamos en agurar el mejor de los éxitos, ganados con dedicación y esfuerzo y felicitarlos al mismo tiempo junto con la Liga de Jóvenes y su Comisión Directiva.

ARARAT
SOCIEDAD COOPERATIVA DE CREDITO LTDA

ԽԱՉ ԲԱՌ ԹԻՒ 6

*Պատրաստեց՝ ՅԻ - ՄԷՆ*



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1.- Գլխաւոր քաղաք: 2.- Մէզը արիւնէն զատող գործարան: 3.- Հակառակէն յոգնակիի մասնիկ: 6.- Գիրի մը հնչումը: 7.- Տասներկու ամիս: 8.- Պէտք եղող: 9.- Արեւելահայերէնով ըսիր: 10.- Գրագիր: Վերջին գիրը փոխելով ցորենի մագ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1.- Մեղրի պէս հոսող: 2.- չափ մը: 3.- խնդալու բացագանչութիւն: Մանչու անուն: 4.- Յարկը այդպէս կը վերջանայ: 5.- Վերջին գիրերու տեղը փոխելով մանչու անուն: Քարքարուտ տեղ: 6.- Հակառակէն գրաբար եսք: Տարուան մէկ տասներկրորդ մասը: 7.- Ոչ պաղ: 8.- Զորս ուետարանիչներէն մէկը: Ագացիին վերջին մասը: 9.- Ֆրանսական ծովեզերեայ քաղաք: 10.- Կրթուած:

ԹԻՒ 5 ԽԱՉ-ԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1.- Հայաստանցի: 2.- Անիրաւ: 3.- Լի: 6.- Նա: 7.- Աղ: 8.- Սանրապ: 9.- Ելմաս է: 10.- Նոր Օր: Ամիս:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1.- Հայրապետին 2.- Ան: 3.- Յի: Խոհարար: 4.- Ար: 5.- Սալ: Կնասէր: 6.- Տփ: Աղալ: 7.- Նմա: 8.- Նեցուկ: 9.- Ասի: 10.- Իրականապէս:

*DONACIONES*

Siranush Takessian e Hijos, en el 5º aniversario del fallecimiento del Sr. Garabed Takessian, efectuaron las siguientes donaciones:

| | |
|---|---|
| Escuela Bakchellian | $ 5.000 |
| Sharyum | $ 2.000 |
| Revista Nor Hardjin | $ 2.000 |
| Sardarabad | $ 2.000 |
| Balassanian Hnos. por fallecimiento de Elizabeth Tatulian, a Sardarabad | $ 1.000 |




PERIODICO ARMENIO
"SARDARABAD"
Director Nahabet Nahabetian
Reg. Nacional de la Prop. Intelectual Nº 1.301.346
REDACCION Y ADMINISTRACION
CNEL. NICETO VEGA 4779
1414 BUENOS AIRES
REP. ARGENTINA

Impreso en los Talleres Graficos "ARARAT"
J. ALVAREZ 1017 — 72-2752